ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոն

*Հեղինակ՝ իր.գ.թ., դոցենտ Հակոբյան Լ. Ա.*

*ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ ՀՀ մունիցիպալ իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

# ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

## 1. Ներածություն

Ժողովրդավարական պետության հիմնական խնդիրն է ստեղծել առավել բարենպաստ պայմաններ իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրացման համար: Միաժամանակ արդյունավետ պետական կառզմակերպման խնդիրը հանգում է իշխանության և կառավարման այնպիսի համակարգի ստեղծմանը, որում այդ խնդիրը լուծվում է լավագույնս: Օբյեկտիվորեն կան խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել միայն համապետական մակարդակով՝ կենտրոնացված միջոցների և ռեսուրսների ներգրավմամբ (տարածքային ամբողջականության և անկախության ապահովում, միասնական իրավական դաշտի ստեղծում և այլն): Բայց միևնույն ժամանակ, բազմաթիվ խնդիրների լուծումը, բնակչության կենսամակարդակի ապահովումն իրականացվում է ոչ թե ընդհանրապես պետական, այլ քաղաքացիների կոմպակտ բնակության տարածքային կազմավորումներում՝ համայնքներում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը դիտարկում է իբրև սահմանադրական կարգի հիմունքներից մեկը: Սահմանադրության ընդունումից հետո՝ մոտ երեք տասնյակ տարիների ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը և սկսվեցին իշխանության ապակենտրոնացման բարեփոխումները: Այս ընթացքում շատ բան է արվել՝ վավերացվել են միջազգային պայմանագրեր, ընդունվել են օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, մշակվել և կիրառվել են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կառուցակարգեր և այլն: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման ճանապարհին կանգնեցին բազմաթիվ խոչընդոտներ, որոնք, ի թիվս այլ միջոցառումների, լուծվեցին համայնքների խոշորացմանն ուղղված բարեփոխումներով:

Այս հարցերն առանձնակի արդիականություն են ձեռք բերել 2015 թվականին Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների ֆոնին, որի արդյունքում վերանայվել և վերաիմաստավորվել են սահմանադրական իրավունքի բազմաթիվ ինստիտուտներ:

Բարեփոխումը շոշափեց նաև տեղական ինքնակառավարումը: Հաշվի առնելով սահմանադրական բարեփոխումների արդյունքները՝ 2018 թվականին վերանայվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը և ընդունվել «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ նոր օրենք: Հաշվի առնելով վերը նշվածը, ակնհայտ է, որ

բազմաթիվ նորամուծությունները, նոր ինստիտուտների և նախկինում գոյություն ունեցող իրավական կարգավորումների նկատմամբ նոր մոտեցումները պահանջում են խորը ուսումնասիրություն:

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի շրջանակներում ուսանողներին մատուցվում են մունիցիպալ իրավունքի հասկացության, առարկայի, մեթոդաբանական հիմունքների վերաբերյալ գիտելիքներ, ունկնդիրները ծանոթանում են մունիցիպալ իրավունքի զարգացման պատմությանը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ինստիտուտների իրավական կարգավիճակին, տեղական ինքնակառավարման հասկացությանը, հատկանիշներին, սկզբունքների, համակարգին և նրա տարրերին, հիմունքներին և այլ հարցերին:

Դասընթացի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել մունիցիպալ իրավունքի զարգացման պատմությանը, հասկացությանը, առարկային ու մեթոդին, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ինստիտուտների իրավական կարգավիճակին: Դասախոսությունների և գործնական պարապմունքների արդյունքում ունկնդիրները կձևավորեն մունիցիպալ իրավունքի ոլորտում ձեռք բերված գիտելիքների կիրառման հմտություններ:

**«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի հիմնական խնդիրներն են՝**

- ապահովել ուսանողների առավելագույն ներգրավածությունը կրթական գործընթացին.
- ապահովել մունիցիպալ իրավունքի տեսության և մունիցիպալ իրավունքի հիմնական ինստիտուտների բովանդակության տիրապետում ուսանողների կողմից.
- զարգացնել ուսանողների մասնագիտական գործունեության ոլորտին առնչվող գիտելիքները.
- օգնել ուսանողներին հասկանալ մունիցիպալ իրավունքի համակարգը, առանձնահատկությունները և կարգավորման առարկան.
- ուսումնասիրել մունիցիպալ իրավահարաբերությունների ոլորտում գործող իրավաբանական նորմերի այն համակցությունը, որը կարգավորում է մունիցիպալ իրավունքի առանձին ինստիտուտներ,
- ձեռք բերել իրավահամեմատական փորձ,
- ձևավորել ուսանողների մոտ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ:

**Դասընթացի օբյեկտը և առարկան:**

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման

վերաբերյալ ակտերը և մունիցիպալ իրավահարաբերությունները կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի առարկան՝ մունիցիպալ իրավունքի սուբյեկտների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են:

**Դասընթացի մուտքային պահանջները:**

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ՀՀ սահմանադրական իրավունքից, ՀՀ վարչական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

**2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.**

**իմանա՝**

*գիտելիքի կիրառման հմտությունները՝*

- Որոշել տեղական ինքնակառավարման ոլորտում իրավական խնդիրների էությունը.
- Կողմնորոշվել մունիցիպալ իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում.
- Ընկալել ՀՀ մունիցիպալ իրավունքի, որպես իրավունքի համալիր ճյուղի, էությունն ու բովանդակությունը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը.
- Հասկանալ ՀՀ մունիցիպալ օրենսդրության կառուցվածքը.
- Ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի և պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված դիրքորոշումների վրա:

**կարողանա՝**

*ընդհանրական իմացական հմտությունները՝*

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն.
- գնահատել տեղական իշխանության դերն ու նշանակությունը պետության և հասարակության ժողովրդավարական համակարգում.
- բացահայտել մունիցիպալ-իրավական ինստիտուտների իրավական կարգավորման առանձնահատկությունները.

օգտվել և կիրառել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտերը:

**ունակ լինի՝**

*ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝*

- Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան, մունիցիպալ ոլորտում ձևավորված վարչական մարմինների իրավակիրառ պրակտիկան.
- Վերլուծել ՀՀ մունիցիպալ իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կատարել տեղական ինքնակառավարման ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն.
- վերլուծել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունները.
- Կարողանալ աշխատել տեղական ինքնակառավարման ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

**Դասավանդման եղանակները և մեթոդները:**

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«ՀՀ մունիցիպալ իրավունք իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

**2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

| Ուսումնական աշխատանքի տեսակները | Ընդամենը, ակադ. ժամեր |
|---|---|
| **1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝** | **72** |
| 1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝ | **34** |
| 1.1.1.Դասախոսություններ | **18** |
| 1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝ | **16** |
| 1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝ | **38** |
| 1.2.1. Քննություններին նախապատրաստում | |
| 1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել) | |
| 1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ | |
| 1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **Ստուգարք** |

**2.3. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:**

**2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը | Դասախոսու-թյուններ | Գործնական / սեմինար պարապմունքներ |
|---|---|---|---|
| 1 | 2=3+4 | 3 | 4 |
| Բաժին 1. ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | **6** | **3** | **3** |
| Թեմա 1. ՀՀ մունիցիպալ իրավունքի առարկան և համակարգը | **3** | 2 | 1 |
| Թեմա 2. «Տեղական իշխանության» պատմական և տեսական հիմունքները | **3** | 1 | 2 |
| ԲԱԺԻՆ II: ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ | **5** | 3 | 2 |
| Թեմա 3. Տարածքային կառավարման հասկացությունը, սկզբունքները, խնդիրները և գործառույթները | **5** | 3 | 2 |
| ԲԱԺԻՆ III: ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ | **23** | 12 | 11 |
| Թեմա 4. Տեղական ինքնակառավարման հասկացությունը | **2** | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Թեմա 5. Տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքներն ու գործառույթները | **2** | 1 | 1 |
| Թեմա 6. Տեղական ինքնակառավարման հիմունքները և երաշխիքները | **4** | 2 | 2 |
| Թեմա 7. Տեղական ինքնակառավարման համակարգը | **3** | 2 | 1 |
| Թեմա 8. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները | **4** | 2 | 2 |
| Թեմա 9. Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում | **4** | 2 | 2 |
| Թեմա 10. Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը | **4** | 2 | 2 |
| **Ընդամենը** | **34** | **18** | **16** |

**3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:**

ՄՈԴՈՒԼ 1

ԲԱԺԻՆ Ի.ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Մունիցիպալ իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:
2. Մունիցիպալ իրավունքի համակարգը և աղբյուրները:
3. Մունիցիպալ իրավունքի տեղը ՀՀ իրավունքի համակարգում:
4. Մունիցիպալ իրավական նորմերը և ինստիտուտները:
5. Մունիցիպալ-իրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:
6. Մունիցիպալ իրավունքը որպես գիտություն և ուսումնական դասընթաց:

ԹԵՄԱ 2. «ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմնական տեսությունները:
2. Տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերը արտասահմանյան երկրներում:
3. Տեղական իշխանության կազմակերպումը մինչխորհրդային Հայաստանում և ՀԽՍՀ-ում:
4. ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման սահմանադրական մոդելի ընդհանուր նկարագրությունը:

## ԲԱԺԻՆ II. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### ԹԵՄԱ 3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Տարածքային կառավարման հասկացությունը:
2. Տարածքային կառավարման սկզբունքները. հասկացությունը և տեսակները:
3. Մարզպետը և մարզպետարանը:
4. Մարզպետի լիազորությունները:

## ԲԱԺԻՆ III: ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### ԹԵՄԱ 4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:
2. Տեղական ինքնակառավարումը որպես սահմանադրական կարգի հիմունք:
3. Տեղական ինքնակառավարումը որպես բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծման իրավունք:
4. Տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդաիշխանության իրացման ձև:

### ԹԵՄԱ 5. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքների հասկացությունը:
2. Տեղական ինքնակառավարման սկզբունքները Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում:
3. Տեղական ինքնակառավարման սկզբունքները ՀՀ ներպետական իրավունքում:
4. Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների հասկացությունը և տեսակները:

## ԹԵՄԱ 6. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմունքների և երաշխիքների հասկացությունը և տեսակները:
2. Տեղական ինքնակառավարման իրավական հիմունքները և երաշխիքները:
3. Տեղական ինքնակառավարման տարածքային հիմունքների և երաշխիքների հասկացությունը և սկզբունքները: Համայնքի տարածքային սահմաններն ու կազմը: Համայնքի վերակազմավորումը:
4. Տեղական ինքնակառավարման կազմակերպական հիմունքները և երաշխիքները:
5. Տեղական ինքնակառավարման ֆինանսա-տնտեսական հիմունքները և երաշխիքները (համայնքի սեփականությունը, բյուջեն, համայնքի տնտեսական գործունեությունը:

## ԹԵՄԱ 7. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Տեղական ինքնակառավարման համակարգի հասկացությունը և դրա տարրերը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը և ձևավորման կարգը:
3. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը՝ ավագանին (ավագանու իրավական վիճակը, իրավասությունը և իրավական ակտերը, գործունեության կազմակերպումը, համայնքի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները):
4. Տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը՝ համայնքի ղեկավարը (իրավական վիճակը, իրավասությունը և իրավական ակտերը):
5. Ժողովրդաիշխանության իրացման անմիջական այլ ձևերը համայնքում:
6. Համայնքային ծառայության հասկացությունը, սկզբունքները և իրավական կարգավորումը, համայնքային ծառայողների իրավական վիճակը:
7. Միջհամայնքային միավևրումները տեղական ինքնակառավարման համակարգում:

ԹԵՄԱ 8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների դասակարգումները:
3. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

ԹԵՄԱ 9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

1. Երևանի ավագանին (իրավական վիճակը և գործառույթները, կազմակերպման կարգը և կառուցվածքը, իրավասությունը և իրավական ակտերը, գործունեության կազմակերպումը, Երևանի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները):
2. Երևանի ավագանու վերահսկողական լիազորությունները:
3. Երևանի քաղաքապետը (իրավական վիճակը և գործառույթները, ընտրության և լիազորությունների դադարեցման հիմքերն ու կարգը, իրավասությունը և իրավական ակտերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, Երևանի վարչական շրջանները և դրանց ղեկավարումը):
4. Երևանի քաղաքապետի լիազորությունները ավագանու հետ հարաբերություններում:
5. Տարածքային կառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում:

ԹԵՄԱ 10. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների խնդիրները և սկզբունքները:
2. Պետական վերահսկողության և հսկողության առանձնահատկությունները տեղական ինքնակառավարման ոլորտում (վարչական հսկողություն, իրավական հսկողություն):
3. Տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքական և իրավաբանական պատասխանատվությունը:

**4. Գրականության ցանկ**

**Հիմնական գրականություն՝**

1. Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ. Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում/ Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան. – Եր.: «Հայրապետ» հրատ., 2022

## ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան


2. Հակոբյան Լ.Ա., Վարագյան Լ.Ա., Ասատրյան Ա.Մ. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխությունների քաղաքական և իրավական նշանակությունը / Լ.Ա. Հակոբյանը, Լ.Ա. Վարագյան, Ա.Մ. Ասատրյան.- Եր., Հրտ. «Հայրապետ», 2021
3. Հակոբյան Լ.Ա., Փխրիկյան Ա.Մ. Տեղական կառավարումը և տեղական ինքնակառավարումն արտասահմանյան երկրներում – Եր., Հեղինակային հրատարակություն, 2010
4. Հակոբյան Ն.Գ. Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ձևավորումն ու զարգացումը. Երևան, «Ոսկան Երևանցի», 2001
5. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ուսումնական ձեռնարկ /ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի.- Երևանի պետ. համալս.- Հարյապետ, 2015
6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին, Այվազյան Ն. Ա., Այվազյան Վ. Ն., Դանիելյան Գ. Բ., Հարությունյան Գ. Գ., Հարությունյան Ա. Շ., Հովհաննիսյան Վ. Հ., Ստեփանյան Վ. Վ., 2016
7. Հարությունյան Ա.Շ. ՀՀ մունիցիպալ իրավունք, Երևան, 2004
8. Հարությունյան Ա.Շ. Տեղական ինքնակառավարումը Ֆրանսիայում, Երևան, 1996
9. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ. Ընդ.խմբ. Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի, -Եր.: «Իրավունք», 2010
10. Մասնակցային Ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման մակարդակում: Ձեռնարկ. – Եր «Ասողիկ», 2013
11. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Յու. Մ. Սուվարյան եւ ուրիշներ.– Եր.: Տնտեսագետ, 2014
12. Авакьян С.А.(Отв. ред.). Муниципальное право России: Учебник — Проспект, 2019
13. Акопян Л.А. Система органов местного самоуправления в Республике Армения / Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Ереван, 2006
14. Алексеев, А.П. Муниципальное право России: учебник / А. П. Алексеев, С. Н. Братановский. – Москва: Риор, Инфра-М, 2018
15. Муниципальное право зарубежных стран (сравнительно-правовой анализ). Под ред. В.В. Еремяна, М., 2006
16. Муниципальное право России: учебник. 3е изд., перераб. и доп. / Н.В. Постовой, В.В. Таболин, Н.Н. Черногор; под ред. Н.В. Постового. – М.: ИД «Юриспруденция», 2015
17. Шургина Е.С. Муниципальное право: учебник / Е. С. Шугрина. - 5-е изд., переработанное и дополненное. – Москва : Норма, Инфра-М, 2015


**Լրացուցիչ**

## ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան


1. Акопян Л.А. Основные теории местного самоуправления // «Օրենք և իրականություն», 2004, N 11/12-13« Երևան, Հայաստան
2. Акопян Л.А. Понятие местного самоуправления // «Իրավաբանության հարցեր» Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի գիտահետազոտական կենտրոնի ամսագիր 2005, N 3
3. Акопян Л.А. Ответственность как признак местного самоуправления // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2006, N 3
4. Акопян Л.А. Территориальная организация местного самоуправления // Իրավագիտության արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու: Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 2007
5. Акопян Л.А., Айвазян Е.Ю. Некоторые проблемы обеспечения представительной природы власти, формируемой в рамках муниципальных выборов // Հանրային կառավարում հանդես, 2023, N 1-2, էջեր 120-129
6. Барабашев Г.В. Местное самоуправление. – М., 1996.
7. Батычко В.Т. Муниципальное право. Конспект лекций. Таганрог: ТТИ ЮФУ, 2010
8. Бартышев В.И. Практикум по муниципальному праву Российской Федерации : Учебное пособие.- Воронеж, 1998.
9. Бондарь Н. С., Чернышев М. А. Муниципальное право и практика его реализации в городском самоуправлении. -Ростов-на-Дону, 1996.
10. Выдрин И.В., Кокотов А.В. Муниципальное право России. Екатеринбурт, 2002
11. Государственная и муниципальная служба: Методология, теория, технология, зарубежный опыт.- Ростов - н/Д., 1997
12. Емельянов Н. А. Местное самоуправление: международный опыт. - Тула, 1995.
13. Емельянов Н.А. Становление местного самоуправления в России: конституционные нормы и реальность. - Тула, 1997
14. Еремян В.В. Местное самоуправление и муниципальное управление в Латинской Америке. – М.: “Грамота”, 1999
15. Замотаев А.А. Местное самоуправление: основные понятия и термины. – М., 1999.
16. Игнатов В.Г., Рудой В.В. Местное самоуправление в современной России. Учебное пособие.- Ростов н/Дону: “Феникс”, 2001
17. Кутафин О.Е., Фадеев В.И. Муниципальное право Российской Федерации. М., 2007
18. Малько А. В., Корсакова С. В. Муниципальное право России: учебник. Изд. Юрайт, 2015
19. Муниципальное право Российской Федерации. Под ред. Ю.А. Дмитриева, М., 2000
20. Местное самоуправление: проблемы и решения. -М., 1996.
21. Местные власти и рыночная экономика. Уроки европейского опыта : Сборник статей. Организация государственной власти и местного самоуправления в субъектах Российской Федерации : тенденции, конституционно-правовые основы, практика. -М., 1996.
22. 84. Нудненко Л.А. Непосредственная демократия в системе местного самоуправления России: теоретические основы. М.: Прогресс, 2004

23. Овчинников И.И. Местное самоуправление в системе народовластия, М., 1999
24. Основополагающие документы Венецианской комиссии 268 в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016
25. Постовой Н.В. Муниципальнео право. М., 1998
26. Постовой Н. В. Местное самоуправление: история, теория, практика. -М., 1995.
27. Таболин В. В. Право муниципального управления. -М., 1997.
28. Таболин В.В. Самоуправление в крупных городах.- М.,1999.
29. Таболин В.В., Корнев А.В. Муниципальное городское право. Правовые и организационные основы деятельности органов местного самоуправления. – М.: Формула права, 2000.
30. Тимофеев Н. С. Коммунальное право ФРГ. -М., 1980.
31. Уваров, А.А. Местное самоуправление как форма публичной власти народа в Российской Федерации: учебное пособие / А. А. Уваров. – Москва: Норма, Инфра-М, 2018
32. Фадеев В.И. Муниципальное право России. М., 1994
33. Чаннов, С.Е. Муниципальное право: учебник и практикум для прикладного бакалавриата / С. Е. Чаннов. - Москва: Юрайт, 2016

**Նորմատիվ ակտեր**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով)
2. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա (15.10.1985թ. Ստրասբուրգ: Հայաստանի Հանրապետությունը միացել է 20.05.1997թ. ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ)
3. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին 09.09.2009թ. Ուտրեխտ, Նիդերլանդներ: Հայաստանի Հանրապետության ամար ուժի մեջ է մտել 01.09.2013թ.
4. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանդրական օրենք (25.05.2016թ.)
5. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը (14.11.2019թ.)
6. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը (13.06.2018թ.)
7. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (07.04.2018թ.)

8. «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքը (23.03.2018թ.)
9. «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը (07.03.2018թ.)
10. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (23.03.2018թ.)
11. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (23.03.2018թ.)
12. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը (26.11.2016թ.)
13. ՀՀ հարկային օրենսգիրք (04.10.2016թ.)
14. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (26.12.2008թ.)
15. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը (14.12.2004թ.)
16. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (07.05.2002թ.)
17. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (05.05.1998թ.)
18. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը (24.06.1997թ.)
19. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը (07.11.1995թ.)
20. ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշում

***Ինտերնետային կայքեր***

www.gov.am
www.mta.am
www.parliament.am
www.arlis.am
www.elections.am

**5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար**
**Հարցաշար՝**

## ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Մունիցիպալ իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:
2. Մունիցիպալ իրավունքի համակարգը և աղբյուրները:
3. Մունիցիպալ իրավունքի տեղը ՀՀ իրավունքի համակարգում:
4. Մունիցիպալ իրավական նորմերը և ինստիտուտները:
5. Մունիցիպալ իրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:
6. Մունիցիպալ իրավունքը որպես գիտություն և ուսումնական դասընթաց:
7. Տեղական ինքնակառավարման հիմնական տեսությունները:
8. Տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերը արտասահմանյան երկրներում:
9. Տեղական իշխանության կազմակերպումը մինչխորհրդային Հայաստանում և ՀԽՍՀ-ում:
10. ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման սահմանադրական մոդելի ընդհանուր նկարագրությունը:
11. Տարածքային կառավարման հասկացությունը:
12. Տարածքային կառավարման սկզբունքները. հասկացությունը և տեսակները:
13. Մարզպետը և մարզպետարանը:
14. Մարզպետի լիազորությունները:
15. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:
16. Տեղական ինքնակառավարումը որպես սահմանադրական կարգի հիմունք:
17. Տեղական ինքնակառավարումը որպես բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծման իրավունք:
18. Տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդաիշխանության իրացման ձև:
19. Տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքների հասկացությունը:
20. Տեղական ինքնակառավարման սկզբունքները Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում:
21. Տեղական ինքնակառավարման սկզբունքները ՀՀ ներպետական իրավունքում:
22. Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների հասկացությունը և տեսակները:
23. Տեղական ինքնակառավարման հիմունքների և երաշխիքների հասկացությունը և տեսակները:
24. Տեղական ինքնակառավարման իրավական հիմունքները և երաշխիքները:
25. Տեղական ինքնակառավարման տարածքային հիմունքների և երաշխիքների հասկացությունը և սկզբունքները: Համայնքի տարածքային սահմաններն ու կազմը: Համայնքի վերակազմավորումը:
26. Տեղական ինքնակառավարման կազմակերպական հիմունքները և երաշխիքները:

27. Տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական հիմունքները և երաշխիքները (համայնքի սեփականությունը, բյուջեն, համայնքի տնտեսական գործունեությունը):
28. Տեղական ինքնակառավարման համակարգի հասկացությունը և դրա տարրերը:
29. Տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը և ձևավորման կարգը:
30. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը՝ ավագանին (ավագանու իրավական վիճակը, իրավական ակտերը, գործունեության կազմակերպումը, համայնքի ավագանու անդամի իրավական վիճակը):
31. Տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը՝ համայնքի ղեկավարը (իրավական վիճակը, գործունեության կարգը, իրավական ակտերը):
32. Համայքւ ղեկավարի և ավագանու անդամի լիազորությունների դադարման հիմքերը:
33. Ժողովրդաիշխանության իրացման անմիջական այլ ձևերը համայնքում:
34. Համայնքային ծառայության հասկացությունը, սկզբունքները և իրավական կարգավորումը:
35. Համայնքային ծառայողների իրավական վիճակը:
36. Միջհամայնքային միավևրումները տեղական ինքնակառավարման համակարգում:
37. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:
38. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների դասակարգումները:
39. Համայնքի ավագանու լիազորությունները:
40. Համայնքի ղեկավարի լիազորությունները:
41. Երևանի ավագանին (իրավական վիճակը և գործառույթները, կազմակերպման կարգը և կառուցվածքը, իրավասությունը և իրավական ակտերը, գործունեության կազմակերպումը, Երևանի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները):
42. Երևանի ավագանու վերահսկողական լիազորությունները:
43. Երևանի քաղաքապետը (իրավական վիճակը և գործառույթները, ընտրության և լիազորությունների դադարեցման հիմքերն ու կարգը, իրավասությունը և իրավական ակտերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, Երևանի վարչական շրջանները և դրանց ղեկավարումը):
44. Երևանի քաղաքապետի լիազորությունները ավագանու հետ հարաբերություններում:
45. Տարածքային կառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում:
46. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների խնդիրները և սկզբունքները:

47. Պետական վերահսկողության և հսկողության առանձնահատկությունները տեղական ինքնակառավարման ոլորտում (վարչական հսկողություն, իրավական հսկողություն):
48. Տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքական և իրավաբանական պատասխանատվությունը:

**6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:**

**Խմբային քննարկում.** Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

**Ելույթներ ըստ թեմայի.** Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

**Ստուգարք.** Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: